# Սփյուռքահայ ճանաչված գիտնականները ընտրվել են ԳԱԱ արտասահմանյան անդամ

## *Նրանց շարքում՝ Երվանդ Ազատյանը*

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշմամբ գիտության մեջ ունեցած ներդրման եւ Հայաստանի գիտության զարգացմանը նպաստելու համար սփյուռքահայ 78 ճանաչված գիտնականներ ընտրվել են ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ: Նորընտիր արտասահմանյան անդամների հետ տարվող աշխատանքը կհամակարգի ակադեմիայի նորաստեղծ սփյուռքահայ գիտնականների բաժինը, որի նպատակն է աշխուժացնել Հայաստան-սփյուռք կապերը, համախմբել հայկական սփյուռքի գիտական ներուժը, նպաստել Հայաստանի գիտական առաջընթացին: Արտասահմանյան անդամներ ընտրվել են Երվանդ Ազատյանը՝ ԱՄՆ-ից, Ռայմոնդ Գեւորգյանը՝ Ֆրանսիայից, Գ. Թոսունյանը՝ Ռուսաստանից եւ ուրիշներ: ԳԱԱ-ի նորընտիր անդամների ամբողջական ցուցակը կարող եք կարդալ «**Ազգի**» կայքէջի «Լուրեր» բաժնում: